

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31**

ՈՒ Ղ Ե Ց ՈՒ Յ Ց

**ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ
ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Սույն ուղեցույցի հիմքում դրվել են Արցախի Հանրապետության ընդրական օրենսգիրքը և Արցախի Հանրապետության կենտրոնական ընդրական հանձնաժողովի որոշումները, որոնք տեղադրված են կենտրոնական ընդրական հանձնաժողովի համացանցային կայքում (cecokr.am):

Տեղամասային ընկերական հանձնաժողովի հարգելի անդամներ.

Քվեարկության օրը դուք աշխատելու եք բազմաթիվ ընկերողների հետ: Դա լուրջ պատասխանատվություն է, միևնույն ժամանակ՝ պատիվ:

Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ նաև ընկերող է և ունի իր հայացքները, անձնական ու կուսակցական նախապատվությունները: Քվեարկության օրը մոռացե՛ք դրանց մասին, բացառությամբ այն պահի, երբ ինքներդ եք քվեարկելու: Չեք ցանկացած քայլ, գործողություն կամ դիրքորոշում՝ կապված չե՞զ վստահված Կեղամասային կենտրոնում քվեարկության անցկացման և քվեարկության արդյունքների ամփոփման հետ, պետք է բխի արդարության և օրինականության, անաչառության և չեզոքության, կարգապահության և բարեխղճության, ազնվության և գործողությունների թափանցիկության սկզբունքներից:

Հանձնաժողովի անդամի պարտականությունների կատարման ողջ ընթացքում ցուցաբերե՛ք հարգանք միմյանց և ընկերողների, Կեղամասային կենտրոնում ներկա գտնվելու իրավունք ունեցող մյուս անձանց նկատմամբ, առաջնորդվե՛ք միայն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ:

Կարծում ենք, որ սույն գրքույկը՝ որպես ուսումնական ձեռնարկ և ընթացակարգային ուղեցույց, օգտակար կլինի Կեղամասային ընկերական հանձնաժողովի աշխատանքները Արցախի Հանրապետության ընկերական օրենսգրքին և Արցախի Հանրապետության կենտրոնական ընկերական հանձնաժողովի որոշումներին համապատասխան կազմակերպելու համար:

**Արցախի Հանրապետության
կենտրոնական ընկերական հանձնաժողով**

Ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով Արցախի Հանրապետությունում կազմավորվում է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով (ԿԸՀ), տարածքային ընտրական հանձնաժողովներ (այսուհետ՝ ՏարԸՀ) և տեղամասային ընտրական հանձնաժողովներ (այսուհետ՝ ՏԸՀ):

Ընտրական գործընթացում ներգրավված մարմիններից ՏԸՀ-ն ընտրողներին ամենամոտ կանգնած՝ նրանց հետ անմիջականորեն շփվող օղակն է: ՏԸՀ անդամների կատարած աշխատանքի մակարդակով է մեծապես պայմանավորված ընտրողների վստահությունն ընտրությունների նկատմամբ:

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ



ՏԸՀ կազմավորման կարգը

ՏԸՀ-ները կազմավորվում են քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30 և ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն:

ՏԸՀ անդամներին նշանակում են համապատասխան ՏարԸՀ անդամները՝ ՏարԸՀ մեկ անդամ ՏԸՀ մեկ անդամ սկզբունքով, մասնագիտական դասընթացներ անցած և որակավորման վկայականներ ստացած անձանց թվից:

ՏԸՀ անդամ չեն կարող լինել

✘ ԱՀ քրեական օրենսգրքի 147-158.2-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների, ինչպես նաև դիտավորությամբ կատարված միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների համար դատվածություն ունեցող անձինք,

✘ Ազգային ժողովի պատգամավորները,

✘ ԱՀ պետական նախարարը, նախարարները և նրանց տեղակալները,

✘ համայնքների ղեկավարներն ու համայնքի ավագանու անդամները,

✘ շրջանների վարչակազմերի ղեկավարները (Ստեփանակերտի քաղաքապետը) և նրանց տեղակալները,

- ✗ դատավորները,
- ✗ դատախազները,
- ✗ քննչական կոմիտեում ծառայողները,
- ✗ ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատական ակտերի հարկադիր կատարման, արտակարգ իրավիճակների պետական ծառայություններում ծառայողները,
- ✗ զինծառայողները,
- ✗ վստահված անձինք,
- ✗ Հանրապետության նախագահի թեկնածուի, Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազոր ներկայացուցիչները,
- ✗ դիտորդները,
- ✗ Հանրապետության նախագահի թեկնածուները,
- ✗ Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուները:



ՏԸՅ նախագահի, նախագահի տեղակալի և քարտուղարի ընտրության կարգը

ՏԸՅ նախագահը, նախագահի տեղակալը և քարտուղարն ընտրվում են ՏԸՅ առաջին նիստում՝ գաղտնի քվեարկությամբ: ՏԸՅ առաջին նիստը տեղամասային կենտրոնում հրավիրում է ՏարԸՅ նախագահը՝ հանձնաժողովի կազմավորումից հետո՝ երկօրյա ժամկետում: ՏԸՅ առաջին նիստը վարում է ՏԸՅ տարիքով ավագ անդամը:

ՏԸՅ նախագահի, նախագահի տեղակալի և քարտուղարի ընտրության նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա են ՏԸՅ անդամների կեսից ավելին:

Եթե հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար քվեարկվել է մեկ թեկնածու, ապա նա ընտրված է համարվում, եթե ստացել է քվեարկության մասնակիցների ձայների կեսից ավելին:

Եթե հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար քվեարկվել է մեկից ավելի թեկնածու, ապա ընտրված է համարվում քվեարկության մասնակիցների առավել թվով կողմ ձայներ ստացած թեկնածուն: Ձայ-

ների հավասարության դեպքում առավել թվով կողմ ձայներ ստացած թեկնածուների միջև անցկացվում է վիճակահանություն:

Եթե ՏԸՀ նախատեսված ժամկետում հանձնաժողովի նախագահ չի ընտրում, ապա համապատասխան ընտրական հանձնաժողովի նախագահին նշանակում է ՏարԸՀ նախագահը՝ եռօրյա ժամկետում համապատասխան հանձնաժողովի կազմից:

Նախագահի տեղակալի և քարտուղարի ընտրությունը կատարվում է նախագահի ընտրության համար նախատեսված կարգով:



ՏԸՀ անդամների կարգավիճակը



ՈՒ Շ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն *ՏԸՀ անդամն ընտրական հանձնաժողովում գործում է անկախ և չի ներկայացնում իրեն նշանակողին:*

ՏԸՀ անդամն իրավունք ունի՝

- ✓ նախապես ծանոթանալ Հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող հարցերին և փաստաթղթերին,
- ✓ ելույթ ունենալ Հանձնաժողովի նիստում,
- ✓ ներկայացնել առաջարկություններ, առարկություններ և պահանջել, որ այդ հարցով անցկացվի քվեարկություն,
- ✓ նիստի մասնակիցներին տալ հարցեր, ստանալ սպառիչ պատասխաններ,
- ✓ հայտնել քվեարկության նախապատրաստման, կազմակերպման և անցկացման վերաբերյալ իր կարծիքը,
- ✓ պահանջել, որ իր գնահատականն արձանագրվի ՏԸՀ գրանցամատյանում, եթե գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել Ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում,
- ✓ իրականացնել Ընտրական օրենսգրքով սահմանված այլ լիազորություններ:

ՏԸՅ անդամը պարտավոր է՝

- ✓ կատարել Հանձնաժողովի նախագահի՝ իր իրավասության սահմաններում տված հանձնարարությունները,
- ✓ մասնակցել Հանձնաժողովի աշխատանքներին և կատարել իր լիազորությունները,
- ✓ մասնակցել ընտրական հանձնաժողովի անդամների համար կազմակերպվող մասնագիտական դասընթացներին,
- ✓ մասնակցել Հանձնաժողովի նիստերին և քվեարկությանը՝ քվեարկել կողմ կամ դեմ,
- ✓ ստորագրել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունը: Եթե նա արձանագրության տվյալների վերաբերյալ ունի առարկություն (հատուկ կարծիք), ապա այդ մասին գրառում է կատարում արձանագրությունում՝ դրա համար նախատեսված հատուկ տեղում:
- ✓ կրել Ընտրական օրենսգրքով սահմանված այլ պարտականություններ:



ՈՒ Շ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

✓ *Ընտրական հանձնաժողովի անդամներին արգելվում է նախընտրական քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել:*

✓ *ՏԸՅ անդամներն իրենց լիազորությունների իրականացման նպատակով սեփական նախաձեռնությամբ ազատվում են ծառայողական (աշխատանքային) պարտականությունները կատարելուց:*



ՏԸՅ նախագահին, նախագահի տեղակալին, հանձնաժողովի քարտուղարին պաշտոնանկ անելու և հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարելու կարգը

ՏԸԸ նախագահը, նախագահի տեղակալը և հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի անդամների ձայների ընդհանուր թվի առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ կարող են պաշտոնանկ արվել միայն, եթե քվեարկության նախորդ օրը կամ քվեարկության օրը ցու-

ցաբերում են ակնհայտ անգործություն, որի հետևանքով կարող է վտանգվել քվեարկության նախապատրաստումը կամ քվեարկության բնականոն ընթացքը կամ քվեարկության արդյունքների ամփոփումը: Այդ դեպքում ՏԸՀ նախագահ, նախագահի տեղակալ կամ հանձնաժողովի քարտուղար նշանակում է ՏարԸՀ նախագահը՝ ՏԸՀ այլ անդամներից:

ՏԸՀ անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են, եթե՝

- 1) նա չունի հանձնաժողովում նշանակվելու իրավունք,
 - 2) դատապարտվել է ԱՀ քրեական օրենսգրքի 147-158.2-րդ հոդվածներով, կամ նրա նկատմամբ որպես պատիժ կիրառվել է կալանք կամ ազատազրկում,
 - 3) ներկայացրել է ՏԸՀ նախագահի, նախագահի տեղակալի, հանձնաժողովի քարտուղարի կամ անդամի պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում,
 - 4) զորակոչվել է,
 - 5) մահացել է,
 - 6) Ընտրական օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:
- 1-5-րդ կետերով նախատեսված դեպքերում լիազորությունների վաղաժամկետ դադարման փաստը արձանագրում է ՏԸՀ նախագահը:



ՏԸՀ աշխատանքների կազմակերպումը

ՏԸՀ գործունեությունն իրականացվում է կոլեգիալության սկզբունքով՝ նիստերի միջոցով: ՏԸՀ նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի անդամների կեսից ավելին, բացառությամբ համապետական ընտրություններ նշանակվելու օրվանից սկսած մինչև ընտրությունների արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշում ընդունելը ներառյալ ընկած ժամանակահատվածում կայացող հերթական նիստերի:

Հանձնաժողովի աշխատանքները ղեկավարում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա հանձնարարության կամ բացակայության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի տեղակալը:

ՏԸՅ հերթական նիստերը սահմանված են Ընտրական օրենսգրքով.

- **ՏԸՅ առաջին նիստը.** որը կայանում է ՏԸՅ կազմավորումից հետո՝ երկօրյա ժամկետում, վարում է ՏԸՅ տարիքով ավագ անդամը,
- **քվեարկության նախորդ օրը** ՏԸՅ նիստը, որում վիճակահանությանը որոշված քվեաթերթիկներն ստորագրող հանձնաժողովի անդամները մինչև ժամը 24.00-ն պարտավոր են ստորագրել բոլոր քվեաթերթիկները,
- **քվեարկության օրը՝ ժամը 7.00-ին** ՏԸՅ նիստը, որում վիճակահանությանը որոշվում են ՏԸՅ անդամների գործառույթները և դրանց հերթափոխը,
- քվեարկության ավարտից՝ ժամը 20.00-ից հետո՝ **քվեարկության արդյունքների ամփոփման նիստը:**

Հանձնաժողովի նիստը վարում է հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ նախագահի տեղակալը:

Հանձնաժողովի նիստին հանձնաժողովի անդամների մասնակցության մասին նշվում է հանձնաժողովի գրանցամատյանում: Այդ գրանցման տակ ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

Հանձնաժողովի նիստում որոշումներ ընդունելու կարգը

Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են հանձնաժողովի իրավագոր նիստում՝ բաց քվեարկությամբ, բացառությամբ ՏԸՅ առաջին նիստի:

Քվեարկությունը համարվում է կայացած, եթե քվեարկությանը մասնակցել է հանձնաժողովի անդամների **ընդհանուր թվի կեսից ավելին:**

Հանձնաժողովի անդամը **պարտավոր է** մասնակցել քվեարկությանը:

Որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին քվեարկել են հանձնաժողովի անդամների **ընդհանուր թվի կեսից ավելին:**

Համապետական ընտրությունների նշանակվելու օրվանից սկսած մինչև ընտրությունների արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշում ընդունելը ներառյալ հերթական նիստերն **իրավագոր են՝ անկախ նիստին ներկա անդամների թվից,** եթե սպառված են հանձնաժողովի՝

նիստ գումարելու համար անհրաժեշտ թվով անդամներին նիստին մասնակից դարձնելու բոլոր հնարավորությունները:



ՏԸՅ լիազորությունները

ՏԸՅ-ը՝

- կազմակերպում է քվեարկությունը, ամփոփում քվեարկության արդյունքներն ընտրական տեղամասում,
- կազմում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրություններ, արձանագրությունների օրինակը փակցնում է տեղամասային կենտրոնում,
- հանձնաժողովի կնիքը, գրանցամատյանը, քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների երկուական օրինակները, ընտրական փաստաթղթերի ընդհանուր փաթեթները (մեկանգամյա օգտագործման պարկերը), ընտրողների ցուցակները պարունակող փոքր պարկը, քվեատուփերը և քվեարկության խցիկ(ներ)ը ներկայացնում է ՏարԸՅ,
- իրականացնում է Ընտրական օրենսգրքով նախատեսված այլ լիազորություններ:

ՏԸՅ լիազորությունները դադարեցվում են քվեարկության օրվանից 5 օր հետո, իսկ վերաքվեարկություն անցկացվելու դեպքում՝ վերաքվեարկության օրվանից 5 օր հետո:



Սկզբունքներ և կանոններ, որոնցով պետք է առաջնորդվի ՏԸՅ անդամը

- Չարգել օրենքը, հետևել նրա տառին
- Լինել անաչառ, չեզոք, անկողմնակալ, անկախ, զուսպ, քաղաքավարի
- Չատուկ հարգալից վերաբերմունք ունենալ ԱՅ պետական խորհրդանիշների, ընտրողների, ընտրության բոլոր մասնակիցների (դիտորդներ, ՁԼՄ ներկայացուցիչներ, վստահված անձինք և այլոք) նկատմամբ

- Ուշադրություն դարձնել սեփական արտաքին տեսքին ու վարվելակերպին, վերնազգեստի վրա կրել համապատասխան վկայական:

ՎԱՏԱԳՎԱԾ ԱՆՁԻՆՔ, ԴԻՏՈՐԴՆԵՐԸ ԵՎ ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Ընտրությունների թափանցիկությունն ու հրապարակայնությունը ապահովելու նպատակով, Ընտրական օրենսգրքի համաձայն, ընտրական գործընթացի մասնակիցներ են մաս վստահված անձինք, դիտորդները և զանգվածային լրատվության միջոցների (ՁԼՄ) ներկայացուցիչները, որոնց իրավունքները, պարտականությունները և գործունեության երաշխիքները սահմանված են Ընտրական օրենսգրքով:

Վստահված անձինք ներկայացնում են Հանրապետության նախագահի թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) շահերը:

Վստահված անձն իրավունք ունի.

➤ խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու հանձնաժողովի նիստերին, քվեարկության ընթացքում ներկա լինելու քվեարկության սենյակում: Սա նշանակում է, որ հանձնաժողովի նիստերի ժամանակ վստահված անձը՝ նիստը վարողի թույլտվությամբ, կարող է մասնակցել համապատասխան հարցի քննարկանք, ելույթներ ունենալ, հարցեր տալ, առաջարկություններ կատարել,

➤ ՏԸՀ նախագահի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ուն կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, ԾԱՆՈԹԱՆԱԼՈՒ.

⚡ ՏԸՀ տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին (բացառությամբ քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների),

⚡ դատարանի համապատասխան վճիռներին, ընտրողին տրամադրած լիազոր մարմնի համապատասխան տեղեկանքին,

⚡ քվեարկված քվեաթերթիկներին և դրանցում կատարված նշումներին,

➤ չմիջամտելով ընտրական հանձնաժողովի աշխատանքներին

և չխաթարելով քվեարկության ընթացքը՝ ինքնուրույն կատարելու քաղվածքներ և նշումներ ընտրական փաստաթղթերից (բացառությամբ քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների), քվեարկության արդյունքների վերահաշվարկի ժամանակ ինքնուրույն կատարելու քաղվածքներ քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակներից,

➤ Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և դեպքերում բողոքարկելու ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները, անգործությունը,

➤ ԿԸՅ սահմանած կարգով հետևելու քվեաթերթիկների տպագրման, փոխադրման, պահպանման և հաշվարկման գործընթացներին,

➤ չմիջամտելով հանձնաժողովի անդամի աշխատանքներին՝ ներկա գտնվելու հանձնաժողովի՝ ընտրողների գրանցումն իրականացնող, քվեաթերթիկներ հատկացնող և քվեաթերթիկներ կնքող անդամների, քվեատուփերը հսկող անդամի կողքին և հետևելու նրանց աշխատանքներին,

➤ ընտրական հանձնաժողովի աշխատանքների վերաբերյալ հանձնաժողովի նախագահին ներկայացնելու դիտարկումներ և առաջարկություններ,

➤ պահանջելու, որ իր գնահատականն արձանագրվի ՏԸՅ գրանցամատյանում, եթե գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել Ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում,

➤ քվեարկության արդյունքները ամփոփելիս ՏԸՅ նախագահի, տեղակալի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, անարգել ծանոթանալու քվեարկած քվեաթերթիկներին և դրանցում կատարված նշումներին, ներկա գտնվելու քվեաթերթիկների հաշվարկմանն ու քվեարկության արդյունքների ամփոփմանը,

➤ անարգել լուսանկարահանել, տեսանկարահանել քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը,

➤ իրականացնելու Ընտրական օրենսգրքով իրեն վերապահված այլ իրավունքներ:

Դիտորդներ կարող են լինել Արցախի Հանրապետության և օտարերկրյա հասարակական կազմակերպությունների, միջազգային կազ-

մակերպությունների, օտարերկրյա պետությունների ներկայացուցիչները:

Դիտորդը, ՁԼՍ ներկայացուցիչն իրավունք ունեն.

➤ ներկա լինելու ընտրական հանձնաժողովի միստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում,

➤ ԿԸՀ սահմանած կարգով հետևելու քվեաթերթիկների տպագրման, փոխադրման, պահպանման և հաշվարկման գործընթացներին,

➤ ՏԸՀ նախագահի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ուն կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, **ԾԱՆՈԹԱՆԱԼՈՒ.**

⚡ ՏԸՀ տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին (բացառությամբ քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների),

⚡ դատարանի համապատասխան վճիռներին, ընտրողին տրամադրած լիազոր մարմնի համապատասխան տեղեկանքին.

➤ չմիջամտելով ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և չխաթարելով քվեարկության ընթացքը՝ ինքնուրույն կատարելու քաղվածքներ և նշումներ ընտրական փաստաթղթերից (բացառությամբ ընտրողների ստորագրած ցուցակների),

➤ ազատ տեղաշարժվելու քվեարկության սենյակում՝ քվեաթերթիկների, ընտրողների ցուցակների ու քվեատուփերի դիտարկման համար,

➤ հրապարակայնորեն, այդ թվում՝ ՁԼՍ-ներով հայտնելու կարծիք, անելու հայտարարություն՝ ընտրությունների կազմակերպման և անցկացման վերաբերյալ,

➤ լուսանկարել, տեսանկարահանել քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը, վերահաշվարկի աշխատանքները,

➤ օգտվելու ընտրական օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներից:

Դիտորդը, ՁԼՍ ներկայացուցիչն իրավունք չուներ՝

✗ միջամտելու ընտրական հանձնաժողովի աշխատանքներին.

✗ միջամտելու ընտրական հանձնաժողովի կողմից որոշումների ընդունմանը.

✗ միջամտելու քվեարկության ընթացքին.

- ✗ իրականացնելու քարոզչություն.
- ✗ ընտրական հանձնաժողովի անդամներին տալու ցուցումներ, ներկայացնելու պահանջներ:



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- ✓ *Քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակներից քաղվածքներ և նշումներ կատարելն արգելվում է:*
- ✓ *Վստահված անձը, դիտորդը, ՁԼՄ ներկայացուցիչը պարտավոր են գրանցվել ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում՝ ընտրական հանձնաժողովի նիստերին, ինչպես նաև քվեարկության ընթացքում՝ քվեարկության սենյակում ներկա գտնվելու համար:*

ՏԸՀ նախագահն ընտրական հանձնաժողովների նիստերի և քվեարկության ընթացքում վստահված անձանց, դիտորդների և ՁԼՄ-ների ներկայացուցիչների համար ապահովում է աշխատանքային անհրաժեշտ և հավասար պայմաններ:

Վստահված անձանց, դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրվում:

Ոչ ոք (այդ թվում՝ ընտրական հանձնաժողովները) իրավունք չունի (իրավունք չունեն) վստահված անձին, դիտորդին, ՁԼՄ ներկայացուցիչին դուրս հանելու քվեարկության սենյակից կամ այլ կերպ նրան մեկուսացնելու հանձնաժողովի աշխատանքներին ներկա գտնվելուց, **բացառությամբ՝**

Ընտրական օրենսգրքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի՝

Վստահված անձի կողմից Ընտրական օրենսգրքի պահանջներն այն եղանակով խախտելու դեպքերի, որոնք էապես խաթարում են ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը:

Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքի՝

Ղիտորդի կողմից որևէ թեկնածուի, ընտրությունների մասնակցող որևէ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) աջակցելու, ինչպես նաև Ընտրական օրենսգրքի պահանջներն այն եղանակով խախտելու դեպքում, որն էապես խաթարում է ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը:

Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքի՝

ՁԼՄ ներկայացուցչի կողմից Ընտրական օրենսգրքի պահանջներն այն եղանակով խախտելու դեպքում, որն էապես խաթարում է ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը:

Ընտրական օրենսգրքի 65-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքի՝

Եթե քվեարկության սենյակում գտնվող դիտորդների, ՁԼՄ ներկայացուցիչների թիվն այնքան է, որ ակնհայտորեն խաթարում է քվեարկության բնականոն ընթացքը, ապա ՏԸԶ-ն իրավասու է սահմանելու քվեարկության սենյակում միաժամանակյա գտնվելու իրավունք ունեցող դիտորդների և ՁԼՄ-ների ներկայացուցիչների առավելագույն թիվը:

Որոշումն ընդունվում է ՏԸԶ անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով:

Որոշումը պետք է համապատասխանի համաչափության սկզբունքին, և ամեն դեպքում այդ որոշմամբ սահմանված թիվը չի կարող նվազ լինել 15-ից:

Այդ սահմանափակումը չի տարածվում միջազգային դիտորդների և վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստառադիոընկերությունների ներկայացուցիչների վրա:

✓ Եթե քվեարկության սենյակում, արդեն իսկ ներկա են սահմանված առավելագույն թվով դիտորդներ և ՁԼՄ-ների ներկայացուցիչներ, ապա Հանձնաժողովի նախագահն իրավասու է արգելել նոր դիտորդների և ՁԼՄ-ների ներկայացուցիչների մուտքը քվեարկության սենյակ: Սույն գործառույթի կատարումն ապահովելու անհնարինության դեպքում Հանձնաժողովի նախագահի պահանջով այն իրականացվում է ԱՀ ոստիկանության օժանդակությամբ:

ԱՀ ԿԸՀ 16.01.2020թ. N 28-Ն որոշում



ՈՒ Շ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ սահմանված կանոնակարգը խախտելու, ինչպես նաև Հանձնաժողովի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքերում՝ վստահված անձի, ՁԼՄ-ների ներկայացուցչի, դիտորդի նկատմամբ կիրառվում է նախազգուշացնում **(ԱՀ ԿԸՀ 16.01.2020թ. N 28-Ն որոշում):**

Նախազգուշացումից հետո վստահված անձի, ՁԼՄ-ների ներկայացուցչի, դիտորդի կողմից Ընտրական օրենսգրքի պահանջներն այն եղանակով խախտելու դեպքում, որն էապես խաթարում է ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը վստահված անձը, ՁԼՄ-ների ներկայացուցիչը, դիտորդը հեռացվում են Հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ քվեարկության սենյակից և տեղամասային կենտրոնից:

Վստահված անձին, դիտորդին, ՁԼՄ-ների ներկայացուցչին Հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնից հեռացնելու որոշումն ընդունվում է **ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով:**

Քվեարկության սենյակում միաժամանակյա գտնվելու իրավունք ունեցող դիտորդների և ՁԼՄ-ների ներկայացուցիչների առավելագույն թիվը սահմանելու, ինչպես նաև դիտորդին, ՁԼՄ ներկայացուցչին, վստահված անձին նախազգուշացնելու, Հանձնաժողովի նիստից և տե-

դամասային կենտրոնից հեռացնելու մասին Հանձնաժողովի գրանցամատյանում գրառվում է Հանձնաժողովի որոշում՝ նշելով պատճառը:

Վստահված անձինք, ՁԼՄ-ների ներկայացուցիչները, դիտորդները վերնագգեստի վրա **ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՐԳՈՎ ՏԵՍԱՆԵԼԻ ՁԵՎՈՎ ՊԵՏՔ Է ԿՐԵՆ** նիստում ներկա գտնվելու իրավունքը հավաստող վկայական:

ՏԸՀ նախագահն **ԱՐԳԵԼՈՒՄ Է** ընտրական հանձնաժողովում, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում ներկա լինելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև վերնագգեստի վրա առանց համապատասխան վկայականի անձանց ներկայությունն ընտրական հանձնաժողովում (ընտրական տեղամասում):

ԸՆՏՐՎԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ

Ընտրությունները նախապատրաստելու և անցկացնելու համար ՏԸՀ-ին տրամադրվում են ընտրական փաստաթղթեր, գրեմական պիտույքներ և այլ նյութեր:

ՏԸՀ նախագահը պատասխանատվություն է կրում դրանց ստացման, տեղափոխման և պահպանության համար:

ՏԸՀ-ն իր ստեղծումից հետո ՏարԸՀ-ից ստանում է՝

- Ընտրական օրենսգիրքը,
- Ուղեցույց (հնարավորության դեպքում՝ հուշաթերթ ՏԸՀ յուրաքանչյուր անդամի համար),
 - ՏԸՀ անդամների վկայականները,
 - համարակալված էջերով և վերադաս հանձնաժողովի կողմից կնիքված ՏԸՀ գրանցամատյանը,
 - քվեախցիկ՝ յուրաքանչյուր 750 ընտրողի հաշվով առնվազն մեկ հատ,
 - գրեմական պիտույքներ,
 - տեղեկատվական այլ նյութեր:

Քվեարկության օրվանից երկու օր առաջ ՏԸՀ նախագահը ընտրողների ռեգիստրը վարող լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանման ղեկավարից ստանում է՝

- ընտրողների ցուցակը,
- ընտրողների լրացուցիչ ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթեր,
- տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները,
- առկայության դեպքում՝ լրացուցիչ ցուցակներ:

Քվեարկության նախորդ օրը ՏԸՅ-ը ՏարԸՅ-ից ստանում է՝

- քվեաթերթիկներ (տեղամասում ընտրողների թվի մինչև 3 տուկոս ավելի քանակով, բայց ոչ պակաս, քան ընտրողների թվից 2 քվեաթերթիկ ավելի),
- ՏԸՅ կնիքը,



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ Մինչև քվեարկության օրը կնիքի փաթեթը բացելն արգելվում է և հանգեցնում պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով.

- կնիքի համար բարձիկ,
- քվեաթերթիկների նմուշներ՝ տեղամասային կենտրոնում փակցնելու համար,
- քվեատուփեր,
- քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություններ (յուրաքանչյուր ընտրության համար առնվազն 4-ական օրինակ) և քաղվածքի ձևեր,
- կապիչներ՝ քվեատուփերը կապելու համար,
- փաթեթներ (ծրարներ, մեկանգամյա օգտագործման պարկեր) հետևյալ փաստաթղթերը փաթեթավորելու համար.
 1. ընտրողների ցուցակները, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակները,
 2. մարված/չօգտագործված քվեաթերթիկները,
 3. անվավեր քվեաթերթիկները,
 4. չսահմանված նմուշի քվեաթերթիկները,
 5. բոլոր թեկնածուներին, կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) կողմ քվեարկված քվեաթերթիկները:



Ի՞նչ հարցեր են լուծում ՏԸՀ-ները կազմավորումից մինչև քվեարկության նախորդ օրը

Քվեարկության օրը դուք աշխատելու եք բավական երկար և համատեղ, կատարելու եք պատասխանատու աշխատանք, ուստի խիստ կարևոր է առաջին իսկ օրվանից համապատասխան աշխատանքային մթնոլորտի ձևավորումը:

- Ծանոթացեք Ընտրական օրենսգրքին և ԿԸՀ որոշումներին:
- Սասնակցեք բոլոր նիստերին և դասընթացներին:
- Ուսումնասիրեք գրանցամատյանը և ծանոթացեք դրա լրացման կարգին:
- Համատեղ քննարկեք հնարավոր իրավիճակներ և փորձեք գտնել լուծումներ:
- Ձեզ մոտ նշեք տեղամասային կենտրոնի, ՏԸՀ նախագահի (անդամների), ինչպես նաև վերադաս հանձնաժողովների հեռախոսահամարները:

ՏԸՀ առաջին նիստից հետո հանդիպեք տեղամասային կենտրոնի շենքը տնօրինող հաստատության ղեկավարին և նրա հետ՝

- պարզեք, թե որ տարածքն է ավելի հարմար քվեարկության և քվեարկության արդյունքների ամփոփման աշխատանքներն իրականացնելու համար.
- ստուգեք հեռախոսի, չիրկիզվող պահարանի, բավարար քանակով սեղանների, աթոռների և անհրաժեշտ այլ պարագաների առկայությունը.
- հավաստիացեք, որ պատշաճ ձևով փակցված են ընտրողների ցուցակները.
- պայմանավորվեք, որ քվեարկության օրը քվեարկության համար նախատեսված տարածքի դուռը բացեն **ժամը 6:30-ին**, որպեսզի քվեարկությունը նախապատրաստելու համար ժամանակ ունենաք:

ՏԸՀ նախագահը պետք է.


- համոզվի, որ քվեարկության օրը ՏԸՀ բոլոր անդամները կլինեն տեղամասային կենտրոնում.

- ՏարԸԳ-ից ստանա քվեարկության համար անհրաժեշտ նյութերն ու պարագաները և քվեարկությունից առնվազն 24 ժամ առաջ ապահովի քվեարկության սենյակի վերջնական կահավորումը:



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ Քվեարկության սենյակի կահավորման հետ կապված խնդիրներով դիմեք համայնքի ղեկավարին: Համաձայն ընտրական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի՝ տեղամասային կենտրոնում քվեարկության բնականոն ընթացքն ապահովող անհրաժեշտ կահավորման համար պատասխանատու է համապատասխան համայնքի ղեկավարը:

Քվեարկության սենյակի գծագիրը



Քվեարկության խցիկները տեղադրվում են միմյանցից առնվազն 1 մետր հեռավորության վրա:

Քվեարկության խցիկները տեղամասային կենտրոնում տեղադրվում են սեղանների վրա այն դիրքով, որ ընտրողը քվեարկելիս գտնվի հանձնաժողովին դեմքով և թիկունքով դեպի պատը:



ՏԸՅ գործողությունները քվեարկության նախորդ օրը

Քվեարկության նախորդ օրը ՏԸՅ նախագահը ՏարԸՅ-ից պետք է ստանա ՏԸՅ կնիքը, քվեաթերթիկներ, քվեատուփեր, արձանագրությունների ձևեր և քվեարկությունն անցկացնելու համար անհրաժեշտ այլ պարագաներ: Նախապես տեղեկացեք ստանալու ժամի և վայրի մասին, որպեսզի կարողանաք ներկա գտնվել:

ՏարԸՅ-ից քվեաթերթիկները տեղամասային կենտրոն բերելուց հետո հանձնաժողովի նիստում վիճակահանությանը որոշեք քվեաթերթիկներն ստորագրող հանձնաժողովի 3-ական անդամներին, ովքեր պարտավոր են այդ օրը՝ մինչև **ժամը 24:00**, ստորագրել բոլոր քվեաթերթիկների հակառակ կողմում:

Այդ վիճակահանությանը մասնակցում են ՏԸՅ բոլոր անդամները, այդ թվում՝ հանձնաժողովի նախագահը, նախագահի տեղակալը և քարտուղարը:

Գրանցամատյանում կատարեք գրառում այդ մասին:



ՈՒ Շ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն *Գրանցամատյանում կատարվող գրառումների համար նախատեսված են համապատասխան բաժիններ, էջեր և ձևաթղթեր, որոնք հնարավորություն են տալիս հեշտությամբ կատարել համապատասխան գրառումները:*

Քվեաթերթիկները ստորագրող հանձնաժողովի անդամներին որոշելու համար ՏԸՅ-ն անցկացնում է վիճակահանություն, որի արդյունքում որոշվում են այն 3-ական անդամները, ովքեր պետք է ստորագրեն Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի ընտրությունների քվեաթերթիկները:

Վիճակահանությունն անցկացնելու նպատակով ՏԸՅ նախագահը պատրաստում է նիստին ներկա հանձնաժողովի անդամների թվին հավասար թվով իրարից չտարբերվող թերթիկներ, թերթիկներից առաջին

երեքի վրա նշում է «Հանրապետության նախագահի» ընտրություններ, երկրորդ երեքի վրա՝ «Ազգային ժողովի» ընտրություններ:

Թերթիկները ծալվում են այնպես, որ չտարբերվեն միմյանցից և զգվում վիճակահանության համար նախատեսված արկղի մեջ: Ըստ հանձնաժողովի անդամների ազգանունների այբբենական հերթակա-նության, հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ վիճակահանության արկղից հանում է մեկ թերթիկ: Համապատասխան նշումով թերթիկներ հանած հանձնաժողովի անդամները ստորագրում են տվյալ ընտրու-թյունների համար նախատեսված քվեաթերթիկները:



Գործողությունների քայլերի հաջորդականությունը

Քվեաթերթիկները հաշվելուց հետո հանձնաժողովի՝ վիճակահա-նությանը որոշված անդամները պետք է ստորագրեն ՏԸՀ-ին հատկաց-ված բոլոր քվեաթերթիկները: Ստորագրությունները դրվում են քվեա-թերթիկների հակառակ կողմում այնպես, որ քվեաթերթիկները սահ-մանված կարգով մարելու ժամանակ ստորագրությունների ամբողջա-կանությունը պահպանվի:

➤ Գրանցամատյանում արձանագրեք տպագրական խոտանի պատճառով քվեաթերթիկների թիվը:

➤ Քվեաթերթիկների կապերը, ընտրողների ցուցակները և կնիքը տեղադրեք չիրկիզվող պահարանում:

➤ Թղթով սոսնձեք չիրկիզվող պահարանը: Սոսնձված թղթի վրա պետք է ստորագրեն հանձնաժողովի նախագահը, տեղակալը և քար-տուղարը: Ցանկության դեպքում հանձնաժողովի մյուս անդամներն ու վստահված անձինք նույնպես կարող են ստորագրել:

➤ Չիրկիզվող պահարանը հանձնեք պահպանության ոստիկա-նության աշխատակցին՝ գրանցամատյանում կազմելով հանձնման-ընդունման մասին համապատասխան արձանագրություն՝ ըստ նշված ձևի:

Խորհուրդ է տրվում գրանցամատյանն ի պահ հանձնել ոստիկանու-թյան աշխատակցին:



ՏԸՅ գործողությունները քվեարկության օրը

🕒 **Ժամը 7:00**

ՏԸՅ անդամները ներկայանում են տեղամասային կենտրոն, սկսվում է ՏԸՅ նիստը:



ՈՒ Շ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն *Եթե քվեարկության օրը ՏԸՅ ոչ բոլոր անդամներն են ներկայացել տեղամասային կենտրոն և անդամների թիվը պակաս է 2/3-ից, ապա ՏԸՅ նախագահը այդ մասին անհապաղ տեղեկացնում է ՏարԸՅ նախագահին:*

ՏԸՅ նախագահը, ստուգելով հատուկ չիրկիզվող պահարանին ստանձված թղթի ամբողջականությունը, ուստիկանության աշխատակիցներից ընդունում է պահարանը, որի մասին գրանցամատյանում կազմվում է արձանագրություն:

Հանձնաժողովն իր նիստում վիճակահանությամբ որոշում է հանձնաժողովի անդամների գործառույթներն ու դրանց հերթափոխը.

Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը վիճակահանությանը չեն մասնակցում:

Վիճակահանությունն իրականացվում է հետևյալ կերպ՝

✓ ՏԸՅ նախագահը պատրաստում է վիճակահանությանը մասնակցող հանձնաժողովի անդամների թվին համապատասխան, իրարից չտարբերվող թերթիկներ, որոնցից՝

■ մեկի վրա նշում է «ցուցակ 1», իսկ ընտրական տեղամասում 1000-ից ավել ընտրողի դեպքում՝ հաջորդ թերթիկի վրա՝ «ցուցակ 2» բառերը,

■ մեկի վրա նշում է «քվեաթերթիկ-1», իսկ ընտրական տեղամասում 1000-ից ավել ընտրողի դեպքում՝ հաջորդ թերթիկի վրա՝ «քվեաթերթիկ-2» բառերը: Շրջիկ արկղի միջոցով քվեարկություն կազմակերպելու դեպքում երկրորդ թերթիկի վրա նշվում է «քվեաթերթիկ և շրջիկ արկղ» բառերը,

■ մեկի վրա նշում է «քվեատուփ» բառը,

- մեկի վրա նշում է «շրջիկ արկղ» բառերը՝ շրջիկ արկղի միջոցով քվեարկություն կազմակերպելու դեպքում, եթե ընտրական տեղամասում ընտրողների թիվը չի գերազանցում 1000-ը,

- ✓ բոլոր թերթիկները (Մասնակցի նշում չպարունակող) ծալում է այնպես, որ մինչև անցից չտարբերվեն և տեղավորում վիճակահանության արկղի մեջ,

- ✓ Հանձնաժողովի անդամները՝ ըստ ազգանունների, իսկ ազգանունները համընկնելու դեպքում՝ անունների (հայրանունների) այբբենական հերթականությամբ, վիճակահանության արկղից հանում են մեկական թերթիկ:

Ամբողջ աշխատանքը բաժանվում է 6 հերթափոխի՝ յուրաքանչյուրը 2 ժամ տևողությամբ:

6 հերթափոխից յուրաքանչյուրի համար ընտրական հանձնաժողովն իրականացնում է առանձին վիճակահանություն:

Վիճակահանությունների արդյունքները գրառվում են ՏԸՀ գրանցամատյանում:

Հանձնաժողովի նախագահը վիճակահանությունների արդյունքներին համապատասխան ապահովում է հանձնաժողովի անդամների հերթափոխը:



Տեղամասային կենտրոնի բացումը

🕒 Մինչև ժամը 8:00-ն

ՏԸՀ նախագահը հանձնաժողովի անդամների և քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ.

- ✓ բացում է չիրկիզվող պահարանը,
- ✓ հանում է քվեաթերթիկները, ընտրողների ցուցակները, կնիքը և գրանցամատյանում կնիք դնելով՝ հայտարարում է կնիքի համարը,

- ✓ ստուգում է քվեատուփերի (առկայության դեպքում՝ մաս շրջիկ արկղի) դատարկ լինելը (բարձրաձայն հայտարարում այդ մասին) և մինչև փակելը դրանք ցուցադրվում են միստին ներկա լինելու իրա-

վունք ունեցող անձանց, ապա հատուկ կապիչներով փակում և կնքում,
✓ ընտրողների ցուցակները հանձնում և ընտրողների գրանցման համար պատասխանատու անդամներին,
✓ քվեաթերթիկները հարյուրական փաթեթով հատկացնում է քվեաթերթիկներ հատկացնող անդամներին,
✓ կնիքը և ընտրական տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները՝ քվեաթերթիկների կնքման համար պատասխանատու անդամին:

Վերոհիշյալ բոլոր գործողությունների մասին ՏԸՀ գրանցամատյանում կատարվում են համապատասխան գրառումներ:

🕒 **Ժամը 8:00-ին** տեղամասը պետք է լինի լիարժեք պատրաստ քվեարկությունն սկսելու համար: Հանձնաժողովի անդամներն պետք է զբաղեցրած լինեն իրենց տեղերը: Սեղաններին պետք է լինեն ընտրական բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

ՏԸՀ նախագահը **ԺԱՍԸ 8.00-ին**, հայտարարում է քվեարկության սկիզբը և թույլատրում ընտրողների մուտքը քվեարկության սենյակ:

Տեղամասային կենտրոնը բացվելուց հետո ՏԸՀ նախագահն **անմիջապես** տեղեկացնում է ՏարԸՀ նախագահին տեղամասը բացված լինելու մասին:



ՈՒ Շ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ՏԸՀ նիստերին, քվեարկության ընթացքում և քվեարկության արդյունքներն ամփոփելու ընթացքում տեղամասային կենտրոնում կարող են գտնվել

1. Կենտրոնական և ՏարԸՀ-ների անդամները՝ համապատասխան հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ.

2. համապետական ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) 1 վստահված անձ.

3. յուրաքանչյուր ՋԼՍ ներկայացնող 1 լրագրող և 1 լուսանկարիչ կամ տեսաձայնագրման 1 օպերատոր.

4. յուրաքանչյուր միջազգային կազմակերպությունից մինչև 2 դիտորդ՝ թարգմանչի ուղեկցությամբ.

5. տեղական դիտորդների դեպքում՝ յուրաքանչյուր կազմակերպությունից՝ 1 դիտորդ:

Քվեարկության արդյունքներն ամփոփելու նիստին կարող է մասնակցել նաև Հանրապետության նախագահի թեկնածուն, Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված 1 թեկնածու:



Տեղամասային կենտրոն մուտք գործելը

Քվեարկության բնականոն ընթացքն ապահովելու, ընտրողների ազատ կամարտահայտման վրա կողմնակի ազդեցությունները հնարավորինս բացառելու և քվեարկության կարգի պահպանման համապատասխան մթնոլորտ ստեղծելու համար էական նշանակություն ունի տեղամասային կենտրոն մուտքի և ելքի կարգավորումը:

Արգելվում է տեղամասային կենտրոն զենքով, զինամթերքով մուտք գործելը: Ձինծառայողները, ազգային անվտանգության և ոստիկանության զորքերում ծառայողները տեղամասային կենտրոն մուտք են գործում ոչ շարային կարգով, առանց զենքի, զինամթերքի: **Քվեարկության բնականոն ընթացքի վտանգման դեպքում տեղամասային կենտրոն զենքով մուտք գործել կարող են միայն ոստիկանության ծառայողները՝ ՏԸՀ նախագահի թույլտվությամբ:**

Քվեարկության սենյակում կուտակումներից ու խառնաշփոթից խուսափելու նպատակով ՏԸՀ նախագահը պետք է հսկի և պարբերաբար ստուգի, թե քվեարկողներից բացի ովքեր են ներկա տեղամասային կենտրոնում, և արդյո՞ք բոլորն ունեն տեղամասային կենտրոնում ներկա գտնվելու իրավունք:



Ինչպե՞ս վարվել, եթե տեղամասային կենտրոնում քվեարկողների թիվը 15-ից անցնում է

Նման պարագայում համաձայն Ընտրական օրենսգրքի 65-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ՏԸՀ նախագահն իրավունք ունի ընտրողներին քվեարկության սենյակ թողնել հերթականությամբ՝ մեկ-մեկ: Քվեար-

կուրսյան սենյակում միաժամանակ չի կարող գտնվել 15-ից ավելի ընտրող:

Սակայն ՏԸՀ նախագահը պետք է այնպես իրականացնի իր այդ լիազորությունը, որպեսզի մուտքի մոտ ամհարկի հերթեր չառաջանան և տեղամասային կենտրոն եկած տվյալ տեղամասի յուրաքանչյուր ընտրող ներկայանա և մասնակցի քվեարկությամբ:



Քվեարկությանը մասնակցելու իրավունքը

Արցախի Հանրապետությունում ընտրելու իրավունք ունեն ընտրության օրը 18 տարին լրացած Արցախի Հանրապետության քաղաքացիները:

Նույն անձը կարող է ընդգրկվել միայն մեկ համայնքի ընտրողների ցուցակում և միայն մեկ անգամ:

Հ Ի Շ Ե Ք

Ընտրական հանձնաժողովներն իրավասու չեն որևէ մեկին ընդգրկելու ընտրողների ցուցակում, նույնիսկ տվյալ տեղամասի հաշվառման առկայության պարագայում:

Եթե անձը հաշվառված է ընտրական տեղամասի տարածքում, սակայն ընդգրկված չէ տվյալ տեղամասի ընտրողների վերջնական ցուցակում, ապա ՏԸՀ նախագահը քաղաքացու անձը հաստատող փաստաթղթի հիման վրա նրան առաջարկում է դիմել լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանում կամ դատարան: Տվյալ անձը կարող է ընդգրկվել ընտրողների լրացուցիչ ցուցակում և մասնակցել քվեարկությանը լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանման տեղեկանքի կամ դատարանի վճռի հիման վրա:

Սի քանի առաջարկություններ տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող ընտրողների վերաբերյալ:

<p style="text-align: center;">Տնտղական հաշմանդամություն</p> <p><i>Տնտղական հաշմանդամություն ունեցող անձը կարող է դժվարանալ տեսնել, նույնիսկ երբ կրում է ակնոցներ, կամ կարող է լինել կույր կամ թույլ տեսնող:</i></p>	<ul style="list-style-type: none"> • Ներկայացրեք, երբ նրանք մտնում են սենյակ: • Տեղեկացրեք ընտրողին, որ համանմանողվում խոչորացույցներ կան: • Եթե ընտրողը խնդրում է, որ իրեն ուղեկցեք ջվեարկության խցիկի կամ ջվեատուփի մոտ, նրան բույլ տվեք բոնևլ Չեր ձևով: • Երբ ընտրողներին օգնում եք նախկինում ձևով, որպեսզի նրանց օգնեք ինքնուրույն գտնել իրենց տեղը: • Ուղղությունները բացատրելիս եղեք ճշգրիտ և կոնկրետ, խուսափեք այս, այդ, այն կողմում, այս կողմում տերմիններից:
<p style="text-align: center;">Լսողության խնդիր ունեցողներ</p> <p><i>Լսողության խնդիր ունեցող անձը կարող է դժվարանալ լսել, նույնիսկ եթե օգտագործում է լսողական սարք:</i></p>	<ul style="list-style-type: none"> • Խոսելու ընթացքում նայեք նրանց դեմքին: • Խոսեք դանդաղ և հստակ: • Եղեք համբերատար ու բարյացակամ և կրկնեք ցուցումները: • Անհրաժեշտության դեպքում թեթև ձեռքով արեք ընտրողի ու շարժումները գրավելու համար:
<p style="text-align: center;">Ֆիզիկական հաշմանդամություն</p> <p><i>Ֆիզիկական հաշմանդամու- րյուն ունեցող անձը կարող է բայելու կամ աստիճաններ բարձրանալու դժվարություն ունենալ և նա կարող է ան- վաստայակ կամ այլ աջակ- ցող սարք օգտագործել:</i></p> <p style="text-align: center;">Հոգեբանասոցիալական հաշմանդամություն</p> <p><i>Հոգեբանասոցիալական հաշմանդամություն ունեցող անձը կարող է այնպիսի խնդիր ունենալ, որն ազդում է նրա մտածողության, զգացմունքների և/կամ վարքի վրա:</i></p>	<ul style="list-style-type: none"> • Անհրաժեշտության դեպքում օգնեք բացել դուռը: • Անվաստայակ օգտագործող անձի հետ խոսելիս նստեք աթոռի վրա, որպեսզի Չեր աչքերը միանույն հարթության վրա լինեն: • Խուսափեք անվաստայակին ձեռք տալուց, մինչև Չեզ թույլ տվելուց չտան: <ul style="list-style-type: none"> • Եղեք համբերատար ու բարյացակամ և կրկնեք ցուցումները: • Հարգեք նրանց անձնական տարածքը: • Հմարավորության դեպքում նրանց առաջարկեք ավելի հանգիստ վայր սպասելու համար:
<p style="text-align: center;">Ստավոր հաշմանդամություն</p> <p><i>Ստավոր հաշմանդամու- թյուն ունեցող անձը կարող է ունենալ սովորելու և ածու- րյա կյանքում կենսագործու- նություն ծավալելու սահ- մանափակ կարողություն:</i></p>	<ul style="list-style-type: none"> • Խոսելու ընթացքում նայեք նրանց դեմքին: • Խոսեք դանդաղ և հստակ: • Զվեարկության կարգը բացատրելիս օգտագործեք պարզ բառեր և արտահայտություններ: • Անհրաժեշտության դեպքում ցուցումներ գրեք կամ նկարեք:
<p>Դիշեք: Հաշմանդամության ոչ բոլոր տեսակներն են տեսանելի մյուսներին: Իմացեք, որ որոշ ընտրողներ ունեն հաշմանդամություն, որը դուք չեք կարող տեսնել, բայց նրանք, այնուամենայնիվ, ունեն աջակցության կարիք:</p>	



Ընտրողների գրանցումը

Քվեարկությանը ներկայացած յուրաքանչյուր ընտրող նախ պետք է գրանցվի: Առանց սահմանված կարգով գրանցվելու՝ ընտրողը չի կարող քվեաթերթիկներ ստանալ և քվեարկել:

Հանձնաժողովի՝ գրանցման համար պատասխանատու անդամը՝

- ստուգում է ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը.
- ընտրողների ցուցակում գտնում է նրա ազգանունը, անունը, հայրանունը և հերթական համարը.
- դրա դիմացի դատարկ սյունակում լրացնում է անձը հաստատող փաստաթղթի տվյալները.
- ընտրողը ստորագրում է յուրաքանչյուր քվեարկության համար նախատեսված առանձին սյունակում (տվյալ դեպքում՝ Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի),
- այդ տվյալների դիմաց նախատեսված սյունակում ստորագրում է նաև հանձնաժողովի՝ գրանցման համար պատասխանատու անդամը:

Յուրաքանչյուր ընտրող գրանցվելիս պետք է ստորագրի ցուցակում իր անվան դիմաց՝ նախատեսված սյունակում:

Եթե ընտրողը չի կարող ինքնուրույն ստորագրել ընտրողների ցուցակում, ապա նրա խնդրանքով կարող է նրան օգնել մեկ այլ քաղաքացի, որը չպետք է լինի ընտրական հանձնաժողովի անդամ կամ վստահված անձ:



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ *Տեսողության պատճառով քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողը կարող է ընտրողների ցուցակում ստորագրելու համար օգտագործել իր անձնական ֆաքսիմելային ստորագրությունը:*



Ի՞նչ փաստաթղթերով կարելի է մասնակցել քվեարկությանը

✓ անձնագիր (այդ թվում՝ նաև նույնականացման քարտը և կենսաչափական անձնագիրը),

✓ անձնագրին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթը՝ տրված լիազոր մարմնի կողմից,

✓ զինծառայողների համար՝ զինվորական վկայականը կամ զինվորական գրքույկը, եթե գրանցվում են (քվեարկում են) զինվորական մասի կազմած ընտրողների ցուցակում:

Պարտադիր ժամկետային զինծառայողները ծառայությունից ԱԶ օրենսդրությամբ սահմանված կարգով ժամանակավոր արձակված լինելու դեպքում իրենց մշտական բնակության վայրերում քվեարկում են զինվորական գրքույկներով՝ ներկայացնելով նաև ծառայությունից ժամանակավոր արձակված լինելու մասին փաստաթղթի պատճենը:



ՈՒ Շ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն *Համաձայն Ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ընտրողի անձը հաստատող փաստաթղթի վավերականության ժամկետի ավարտը հիմք չէ նրան քվեարկության չթողնելու համար:*

Ընտրական ցուցակում տեղ գտած տառասխալը կամ վրիպակը, մնացած տվյալների համապատասխանության դեպքում, հիմք չեն ընտրողին քվեարկելուց զրկելու համար:

ՏԸՀ անդամը, այդ մասին տեղյակ պահելով ՏԸՀ նախագահին և վստահված անձանց, ընտրողների ցուցակի լրացուցիչ սյունակում նշում է ճշգրտված տվյալը և թույլատրում է ընտրողին մասնակցել քվեարկությանը:



ՈՒ Շ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն *Քվեաթերթիկի վրա եղած ավելորդ նշումները կարող են քվեաթերթիկն անվավեր ճանաչելու հիմք հանդիսանալ, ուստի անհրաժեշտ է ուշադիր զննել և ավելորդ նշումներ հայտնաբերելու պարագայում սխալ լրացված (վնասված) քվեաթերթիկների համար սահմանված կարգով մարել դրանք՝ այդ մասին գրանցամատյանում կազմելով համապատասխան արձանագրություն:*



Քվեաթերթիկ ստանալը

Գրանցվելուց անմիջապես հետո ընտրողը մոտենում է հանձնաժողովի՝ քվեաթերթիկների տրամադրման համար պատասխանատու անդամին և ստանում քվեաթերթիկները:

Քվեաթերթիկները կնքող հանձնաժողովի անդամը կարող է համոզվել ընտրողի՝ տեղամասում հաշվառված լինելու մեջ, կնքում է քվեաթերթիկները:



Քվեարկությունը

Ստանալով քվեաթերթիկները, ընտրողն անցնում է քվեարկության խցիկ՝ քվեարկելու:



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ *Ընտրողը քվեաթերթիկները լրացնում է գաղտնի՝ քվեարկության խցիկում: Արգելվում է որևէ ձևով տեղեկանալ, թե ընտրողն ինչպես է քվեարկում:*

Ընտրողը քվեաթերթիկում V ձևի կամ նմանվող նշում է կատարում այն թեկնածուի անվան, Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող այն կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անվանման դիմացի քառանկյունում, ուն կողմ է քվեարկում:

Քվեաթերթիկներն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողն իրավունք ունի հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո քվեարկության խցիկ հրավիրելու այլ անձի, ով չպետք է լինի ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ, դիտորդ, ՋԼՄ ներկայացուցիչ: Նույն անձն իրավունք ունի օգնելու քվեաթերթիկներն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող միայն մեկ ընտրողի: Բացի նշված դեպքից, քվեաթերթիկները լրացնելիս քվեարկության խցիկում այլ անձի ներկայությունն արգելվում է:

Քվեաթերթիկներն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողին օգնող անձի տվյալները գրառվում են ՏԸՉ գրանցամատյանում:

Ընտրողը մոտենում է քվեատուլի համար պատասխանատու անդամին, որը ընտրողին հնարավորություն է ընձեռում քվեաթերթիկները գցելու համապատասխան քվեատուլիերի մեջ:



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ Ընտրողն իրավունք չունի տեղամասային կենտրոնում հայտարարելու, թե ինչպես է քվեարկել: Քվեարկելուց հետո ընտրողն անհապաղ պետք է դուրս գա տեղամասային կենտրոնից:

Քվեատուլի համար պատասխանատու հանձնաժողովի անդամը բացում է քվեատուլիերի ճեղքը և ընտրողին հնարավորություն է ընձեռում քվեաթերթիկները համապատասխան քվեատուլիերի մեջ գցելու համար:



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

✓ Քվեատուլի համար պատասխանատու հանձնաժողովի անդամը պետք է **չափազանց ուշադիր** լինի, որպեսզի ընտրողը քվեաթերթիկները գցի համապատասխան քվեատուլի մեջ, անհրաժեշտության դեպքում ընտրողին առաջարկելով քվեաթերթիկներն առանձնացնել (քվեախցիկում) և ապա տեղադրել համապատասխան քվեատուլիում:

✓ Եթե ընտրողը կարծում է, որ քվեաթերթիկը սխալ է լրացրել կամ վնասել է, ապա հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ նրան տրվում է նոր քվեաթերթիկ՝ ընտրողների ցուցակում նրա տվյալների դիմաց կատարելով համապատասխան նշում: Սխալ լրացված (վնասված) քվեաթերթիկը մարվում է անհապաղ՝ քվեաթերթիկը ներքևի ծախ կամ աջ անկյունից կտրվում է այնպես, որ հանձնաժողովի անդամների ստորագրությունները չվնասվեն: Մարման մասին գրանցամատյանում կազմվում է համապատասխան արձանագրություն:

✓ ՏԸԳ նախագահը քվեարկության օրը տեղամասային կենտրոնում հերթի առկայության դեպքում քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողներին իրավիրում է քվեարկության սենյակ արտահերթ ռեժիմով:

Ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ համապետական ընտրությունների ժամանակ պարտադիր ժամկետային զինծառայության մեջ գտնվող կամ վարժական հավաքներ անցնող զինծառայողները ծառայությունից օրենսդրությամբ սահմանված կարգով ժամանակավոր արձակված լինելու դեպքում հանվում են զորամասի ընտրողների ցուցակից և իրենց մշտական բնակության վայրերում կարող են ընդգրկվել ընտրողների ցուցակում՝ 10-օրյա ժամկետում ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին լիազոր մարմնին հայտ ներկայացնելու դեպքում:

Քվեարկության փուլի առաջին կարևոր դրույթը ընտրական իրավունքի հավասարության սկզբունքի պահպանումն է:

Ընտրական օրենսգրքում ամրագրված է.

- Ընտրողներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով:

- Պետությունը հավասար պայմաններ է ապահովում ընտրողների ընտրական իրավունքի իրականացման համար:

- Յուրաքանչյուր ընտրող յուրաքանչյուր քվեարկության համար ստանում է մեկ քվեաթերթիկ (քվեաթերթիկներ՝ միաժամանակ մի քանի քվեարկություն անցկացնելու դեպքում):

Քվեարկության փուլի երկրորդ կարևոր դրույթը քվեարկության գաղտնիության սկզբունքի պահպանումն է:

Ընտրական օրենսգրքում ամրագրված է.

- Քվեարկությունը գաղտնի է:
- Ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև՝ պարտականություն:

- Քվեարկողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ վերահսկողությունն արգելվում է:

Քվեարկության ընթացքում ՏԸՂ նախագահը՝

- ժամը 8.00-ին հայտարարում է ընտրական տեղամասը բացվելու և քվեարկությունը սկսվելու մասին.

- մինչև ժամը 11.30-ը, 14.30-ը, 17.30-ը և 20.30-ը տվյալներ է հաղորդում ՏարԸՅ՝ համապատասխանաբար մինչև ժամը 11.00-ն, 14.00-ն, 17.00-ն և 20.00-ն տվյալ ընտրական տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի մասին.

- պահպանում է կարգ ու կանոնը տեղամասային կենտրոնում և ապահովում է քվեարկության գաղտնիությունը.

- կարգավորում է ընտրողների հոսքը տեղամասային կենտրոն.

- ըստ անհրաժեշտության քվեաթերթիկներ է տրամադրում հանձնաժողովի՝ քվեաթերթիկների տրամադրման համար պատասխանատու անդամին.

- վիճակահանությունների արդյունքներին համապատասխան ապահովում է հանձնաժողովի անդամների՝ 2 ժամը մեկ պարբերակա-նությամբ հերթափոխը.

- ընդունում է ներկայացված առաջարկությունները, դիտողություն-ները և բողոքները, անհրաժեշտության դեպքում ձեռնարկում միջոց-ներ.

- բացառությունների և թյուրիմացությունների դեպքում կարգավորում է իրավիճակը.

- կազմակերպում է ՏԸՅ անդամների ընդմիջումն այնպես, որ չխա-թարվի հանձնաժողովի աշխատանքը.

- պահպանում է համագործակցությունը ՏԸՅ բոլոր անդամների, վստահված անձանց և դիտորդների միջև:

ՏԸՅ նախագահի տեղակալը՝

- անհրաժեշտության դեպքում փոխարինում է նախագահին և կատարում իր և նախագահի լիազորությունների շրջանակներում նրա կողմից տրված հանձնարարությունները:


ՏԸՅ քարտուղարը՝

- գրանցում է տեղամասային կենտրոն վստահված անձանց, դի-տորդների և լրագրողների ներկայանալու և դուրս գալու ժամանակը, ինչպես նաև հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ գրա-ռումներ կատարում գրանցամատյանում:



Տեղամասային կենտրոնի փակումը

Տեղամասային կենտրոնի փակման համար նշանակված ժամից մոտավորապես 15 րոպե առաջ ընտրողներին հայտարարեք, որ շուտով տեղամասային կենտրոնը փակվելու է:

 **Ժամը 20:00 ՏԸՀ նախագահը հայտարարում է քվեարկության ավարտի մասին և.**

- արգելում է ընտրողների մուտքը քվեարկության սենյակ.
- քվեարկության սենյակում գտնվող չքվեարկած ընտրողներին քվեարկելու հնարավորություն է տալիս.
- փակում է քվեատուփերի ճեղքը.
- դուրս է հրավիրում ՏԸՀ նիստին ներկա գտնվելու իրավունք չունեցող բոլոր անձանց.
- փակում է տեղամասային կենտրոնը:
ՏԸՀ-ն սկսում է քվեարկության արդյունքների ամփոփման նիստը:



Քվեարկության արդյունքների ամփոփումը

Քվեարկության արդյունքների ամփոփումը կատարվում է քվեարկության սենյակում: Քվեարկության արդյունքների ամփոփումն սկսվում է անմիջապես քվեարկության ավարտից հետո և ընթանում առանց ընդհատման մինչև քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ արձանագրության կազմումը:



ՈՒ Շ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն *Համապետական ընտրությունների դեպքում սկզբում բացվում է Հանրապետության նախագահի ընտրությունների քվեաթերթիկների համար նախատեսված քվեատուփը, այնուհետև՝ Ազգային ժողովի ընտրությունների քվեաթերթիկների համար նախատեսված քվեատուփը:*

Միաժամանակ մի քանի ընտրություն անցկացվելու դեպքում ՏԸՀ-ում քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ քվեատուփը բացելուց հետո ՏԸՀ նիստի աշխատանքներին շարունակում են մասնակցել համապատասխան ընտրության համար գրանցված թեկնածու-

ների վստահված անձինք և դիտորդները: Մյուս ընտրության համար գրանցված թեկնածուների վստահված անձինք և դիտորդները մնում են ՏԸՀ-ում, սակայն չեն իրականացնում Ընտրական օրենսգրքով իրենց վերապահված իրավունքները մինչև այդ ընտրության քվեարկության արդյունքների ամփոփման աշխատանքների վերսկսվելը:



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ *Քվեարկության արդյունքների ամփոփման փուլում անհրաժեշտ է խստորեն պահպանել Ընտրական օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված գործողությունների հաջորդականությունը:*

1. Հաշվարկվում են չօգտագործված քվեաթերթիկները: Այդ թվին ավելացվում են նախկինում մարված՝ ընտրողի կողմից ոչ ճիշտ լրացված (վնասված) և հետ վերադարձված քվեաթերթիկները: Ստացված թիվը լրացվում է գրանցամատյանում: Չօգտագործված քվեաթերթիկները մարվում են՝ կտրելով ներքևի աջ կամ ձախ անկյունը: Մարված բոլոր քվեաթերթիկները դրվում են փաթեթի մեջ, փաթեթի վրա գրվում է «մարված քվեաթերթիկներ» բառերը և տեղադրվում ընդհանուր փաթեթում (մեկանգամյա օգտագործման պարկում):

2. Հաշվարկվում է ընտրողների յուրաքանչյուր լրացուցիչ ցուցակի (այդ թվում՝ քվեարկության օրն ընտրական տեղամասում կազմված լրացուցիչ ցուցակի) ընտրողների թիվը՝ առանձին-առանձին, լրացուցիչ ցուցակների ընտրողների թվերի գումարին ավելացնելով ընտրողների ցուցակում ընդգրկված ընտրողների թիվը՝ ստանում է ընտրական տեղամասի ընտրողների ընդհանուր թիվը:

3. Ընտրողների ցուցակներում, այդ թվում՝ բոլոր լրացուցիչ ցուցակներում առկա ընտրողների ստորագրությունների հիման վրա հաշվարկվում է քվեարկության մասնակիցների թիվը և այն լրացվում գրանցամատյանում:

Հ Ի Շ Ե Ք

Թվարկված բոլոր գործողությունների արդյունքում հաշվարկված թվերը հրապարակվում և արձանագրվում են ՏԸՀ գրանցամատյանում:

Հանձնաժողովի նախագահը գրանցամատյանում արձանագրված՝ ընտրական տեղամասում քվեարկության մասնակիցների թիվը հայտնում է ՏարԸՀ նախագահին:



Քվեաթերթիկների տեսակավորումը

Հանձնաժողովի նախագահը բացում է Հանրապետության նախագահի ընտրությունների համար նախատեսված քվեատուփ(եր):

Քվեատուփից հանում է մեկ քվեաթերթիկ: Հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեաթերթիկի վավեր, անվավեր կամ չսահմանված նմուշի լինելու մասին, վավեր քվեաթերթիկի դեպքում հայտարարում նաև, թե ինչպես է քվեարկված, ապա ցուցադրում այնպես, որ այն տեսանելի լինի ներկաների համար: Պահանջի դեպքում քվեաթերթիկը փոխանցվում է հանձնաժողովի մյուս անդամներին: Հանձնաժողովի նախագահի հայտարարությանը համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամը ներկայացնում է առարկություն: Առարկության դեպքում քվեարկության արդյունքով (քվեարկության է դրվում հանձնաժողովի անդամի առաջարկությունը, և եթե հանձնաժողովի անդամի առաջարկությունը քվեարկությամբ չի ընդունվում, ապա ընդունված է համարվում հանձնաժողովի նախագահի առաջարկությունը), իսկ առարկություն չլինելու դեպքում հանձնաժողովի նախագահը, իր հայտարարության համաձայն, ըստ քվեաթերթիկում կատարված քվեարկության նշումի, քվեաթերթիկը դնում է համապատասխան թեկնածուի, օգտին, կամ անվավեր քվեաթերթիկների փաթեթի մեջ, որից հետո քվեատուփից հանում է հաջորդ քվեաթերթիկը:

Այդ գործողությունը կրկնվում է քվեատուփում (կամ քվեատուփերում) առկա բոլոր քվեաթերթիկների համար, որից հետո հաշվարկվում են Ազգային ժողովի ընտրությունների քվեաթերթիկները:

ՏԸՀ-ը հաշվարկված և տեսակավորված քվեաթերթիկները փաթեթավորում է, փաթեթները կնքվում են և ստորագրվում հանձնաժողովի նախագահի կողմից և տեղադրվում ընդհանուր փաթեթում (մեկանգամյա օգտագործման պարկում):

Ցանկության դեպքում փաթեթների վրա կարող են ստորագրել նաև հանձնաժողովի մյուս անդամները և (կամ) վստահված անձինք, որի մասին համապատասխան գրառում է կատարվում գրանցամատյանում:

Ընտրողների ցուցակները և բոլոր լրացուցիչ ցուցակներն ու դրանց կազմման համար հիմք հանդիսացող ոստիկանության տեղեկանքներն ու դատարանի վճիռները փաթեթավորվում են մեկ փաթեթում, փաթեթի վրա գրվում է «ընտրողների ցուցակներ» բառերը, կնքվում է և ստորագրվում ՏԸՀ նախագահի կողմից, տեղադրվում առանձին փաթեթում (փոքր պարկում):




ՈՒ Շ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ձորամասում, ազգային անվտանգության ծառայությունում, ոստիկանության զորքերում, քրեակատարողական հիմնարկում կազմվող ընտրողների ստորագրված ցուցակները փաթեթավորվում են առանձին, փաթեթը կնքվում է և տեղադրվում Ազգային ժողովի ընտրությունների համար նախատեսված ընդհանուր փաթեթում (մեկանգամյա օգտագործման պարկում):



Քվեաթերթիկների վավերականությունը

Սահմանված նմուշի քվեաթերթիկն անվավեր է, եթե՝

- 1) մեկից ավելի թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին նշումներ է ներառում.
 - 2) որևէ նշում չի ներառում.
 - 3) բացի քվեարկության համար ԿԸՀ սահմանած **V**-աձև կամ դրան նմանվող նշանից ներառում է այլ նշում.
 - 4) ՏԸՀ անդամի կողմից ստորագրված կամ կնքված չէ.
 - 5) ակնհայտ խախտված է քվեաթերթիկում նշում կատարելու սահմանված **V** ձևը: Սահմանված ձևի ոչ էական խախտումը չի կարող համարվել քվեաթերթիկի անվավերության հիմք, եթե ընտրողի մտադրությունը հստակ է և աներկբա:
- Քվեաթերթիկը վավեր է, եթե այն անվավեր չէ:



Տեսակավորման ողջ ընթացքում հանձնաժողովի անդամներին արգելվում է նշումներ կատարել, ինչպես նաև իրենց մոտ ունենալ գրիչներ, մատիտներ և նշումներ կատարելու այլ առարկաներ:

Հաշվարկված թվերը հրապարակվում են և արձանագրվում գրանցամատյանում:



ՈՒ Շ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Վստահված անձն իրավունք ունի ՏՀՀ նախագահի, տեղակալի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, անարգել ծանոթանալու քվեարկած քվեաթերթիկներին և դրանցում կատարված նշումներին, ինչպես նաև ներկա գտնվելու քվեաթերթիկների հաշվարկմանն ու քվեարկության արդյունքների ամփոփմանը:

Հիմք ընդունելով կատարված հաշվարկների տվյալները (գրանցամատյանում արձանագրված)՝ ՏՀՀ-ն կազմում է տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրություն:

Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները, այն կնքում է հանձնաժողովի նախագահը:

Եթե հանձնաժողովի որևէ անդամ արձանագրության տվյալների վերաբերյալ ունի առարկություն (հատուկ կարծիք), ապա այդ մասին

գրառում է կատարում արձանագրությունում՝ դրա համար նախատեսված հատուկ տեղում:



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ Արձանագրության կազմումը հանձնաժողովը պետք է ավարտի քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 10 ժամ հետո:

Յուրաքանչյուր արձանագրություն կազմվում է չորս օրինակից. մեկը տեղադրվում է ընտրական փաստաթղթերի ընդհանուր փաթեթում, մեկ օրինակն անմիջապես փակցվում է տեղամասային կենտրոնում՝ ընտրողների ցուցակների կողքին, 2 օրինակը ներկայացվում է ՏարԸՀ:

ՏԸՀ-ում ներկա լինելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց տրվում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք՝ վավերացված ՏԸՀ նախագահի և քարտուղարի ստորագրություններով և ՏԸՀ կնիքով:

Քվեարկության ավարտից հետո ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում, **այսինքն՝ մինչև հաջորդ օրը, առավոտյան ժամը 8-ը** ՏարԸՀ են ներկայացվում.

- ընտրական փաստաթղթերի ընդհանուր փաթեթները (մեկանգամյա օգտագործման պարկերը).
- ընտրողների ցուցակները (բացառությամբ զորամասում և քրեակատարողական հիմնարկում կազմվող՝ ընտրողների ստորագրված ցուցակների) պարունակող փոքր պարկը.
- քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների երկուական օրինակը.
- ՏԸՀ գրանցամատյանը.
- ՏԸՀ կնիքը.
- քվեատուփերը /շրջիկ արկղը/.
- քվեախցիկ(ներ)ը.
- ընտրական գրականությունը և /կամ այլ նյութերը:



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ Քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների երկուական օրինակը, գրանցամատյանը և կնիքը ՏարԸՀ են տեղափոխվում կնքված և փաթեթավորված փաստաթղթերի ընդհանուր փաթեթներից (մեկանգամյա օգտագործման պարկերից) առանձին:

Ընտրական փաստաթղթերը ՏԸՅ նախագահը և քարտուղարը ՏարԸՅ են տեղափոխում հնարավորության դեպքում ոստիկանության ծառայողների ուղեկցությամբ:

Ընտրական փաստաթղթերը ՏարԸՅ-ում հանձնվում և ընդունվում են հանձնողի ու ընդունողի կողմից ստորագրելու և ստացական տալու միջոցով:



ՈՒ Շ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Վստահված անձինք, դիտորդները և ՁԼՄ ներկայացուցիչները կարող են իրենց միջոցներով ուղեկցել ընտրական փաստաթղթերը ՏարԸՅ տեղափոխող ավտոմեքենան:



Ի՞նչ է արվում ՏարԸՅ-ում

➤ ՏարԸՅ-ում ստուգվում է տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների կազմման վավերականությունը:

➤ ՏարԸՅ-ը համեմատում է կնիքի համարը ՏԸՅ արձանագրության կնիքի համարի հետ, որից հետո ՏարԸՅ գործավարության մատյանում կատարում է գրառում ՏԸՅ կնիքի ստացման մասին և տրվում է ստացական:



ՈՒ Շ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Չի բացառվում արձանագրություններում թվաբանական սխալների առկայությունը: Նման դեպքերում ՏԸՅ նախագահը և քարտուղարը վերացնում են այդ սխալները՝ ուղղումները վավերացնելով իրենց ստորագրություններով:

Հ Ի Շ Ե Ք

Ելակետային տվյալների փոփոխություն չի կատարվում: Ելակետային են ՏԸՅ կողմից հատ-հատ հաշվելու միջոցով ստացված տվյալները:

ՍՏԱԾԻՈՆԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՅՄԱՆ ԿԱՐԳԸ

Ստացիոնար բուժման մեջ գտնվող, քվեարկության օրը տեղամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող ընտրողների քվեարկությունը կազմակերպվում է ստացիոնար բժշկական հաստատությունում՝ շրջիկ արկղի միջոցով՝ **ԺԱՍԸ 8.00-ԻՑ 3ԵՏՈ՝** այն հաշվարկով, որ քվեարկությունն ավարտվի **ՄԻՆՉԵՎ ԺԱՍԸ 18.00-Ն:**

Շրջիկ արկղի միջոցով քվեարկության կազմակերպման ժամանակը որոշում և հայտարարում է ՏԸՀ նախագահը՝ հիմք ընդունելով շրջիկ արկղի միջոցով քվեարկող լրացուցիչ ցուցակում ընդգրկված ընտրողների թիվը, ինչպես նաև տեղամասում ՏԸՀ անդամների աշխատանքային ծանրաբեռնվածությունը:

Շրջիկ արկղի միջոցով քվեարկությունը կազմակերպում է ՏԸՀ այն անդամը, որին քվեարկության օրը՝ ժամը 7.00-ին անցկացված վիճակահանությամբ, ՏԸՀ նախագահի հայտարարած ժամի համար բաժին է ընկել «շրջիկ արկղ» կամ «քվեաթերթիկ և շրջիկ արկղ» բառերը պարունակող թերթիկը:

Եթե ընտրական տեղամասը ընդգրկում է մի քանի ստացիոնար բժշկական հաստատություն, ապա շրջիկ արկղի միջոցով քվեարկությունը կարող են կազմակերպել վիճակահանությամբ համապատասխանաբար «շրջիկ արկղ» կամ «քվեաթերթիկ և շրջիկ արկղ» թերթիկ բաժին ընկած ՏԸՀ տարբեր անդամներ, կախված այդ գործառույթն իրականացնելու համար ՏԸՀ նախագահի հայտարարած ժամանակից:

ՏԸՀ նախագահը շրջիկ արկղի միջոցով քվեարկություն անցկացնող հանձնաժողովի անդամին տրամադրում է.

- փակված և կնքված շրջիկ արկղը,
- ստացիոնար բժշկական հաստատությունում քվեարկությանը մասնակցող ընտրողների լրացուցիչ ցուցակը,
- ցուցակում ընդգրկված ընտրողների թվից մինչև երեք տոկոս ավելի քանակով կնքված քվեաթերթիկներ:

Հատկացված ընտրական փաստաթղթերի և դրանց քանակի մասին համապատասխան գրառումներ են կատարվում ՏԸՀ գրանցամատյանում: Հանձնաժողովի անդամին, անհրաժեշտության դեպքում ՏԸՀ նախագահի պահանջով, կարող է ուղեկցել ոստիկանության ծառայողը:

Ստացիոնար բժշկական հաստատությունում հանձնաժողովի անդամը ստուգում է ընտրողի ինքնությունը, ընտրողների լրացուցիչ ցուցակում գտնում նրա անուն-ազգանունը, լրացնում ընտրողի անձը հաստատող փաստաթղթի տվյալները:

Ընտրողը ստորագրում է ցուցակում իր տվյալների դիմաց, իսկ հանձնաժողովի անդամն ստորագրում է ընտրողի ստորագրությունների դիմաց և քվեաթերթիկները հանձնում է ընտրողին:

Ընտրողը քվեաթերթիկները լրացնում է գաղտնի: Հանձնաժողովի անդամը հնարավորություն է ստեղծում ապահովելու ընտրողի քվեարկության գաղտնիությունը:

Քվեաթերթիկում քվեարկության մասին նշում կատարելուց հետո ընտրողը քվեաթերթիկները ծալում է, հանձնաժողովի անդամը բացում է շրջիկ արկղի ճեղքը և ընտրողին հնարավորություն ընձեռում քվեաթերթիկները շրջիկ արկղի մեջ գցելու:

Քվեարկության ավարտից հետո հանձնաժողովի անդամը փակում՝ հատուկ կապիչով կապում է շրջիկ արկղի ճեղքը և անհապաղ վերադառնում ընտրական տեղամաս:

Հանձնաժողովի անդամը ՏԸՀ նախագահին է հանձնում.

- հատուկ կապիչով փակված շրջիկ արկղը,
- չօգտագործված, ընտրողի կողմից ոչ ճիշտ լրացված կամ վնասված և հետ տված քվեաթերթիկերը,
- ստացիոնար բժշկական հաստատությունում ընտրողների լրացուցիչ ցուցակը,

ինչի մասին համապատասխան գրառում է կատարվում հանձնաժողովի գրանցամատյանում:

Շրջիկ արկղը տեղադրվում է տեղամասային կենտրոնում, բոլորի համար տեսանելի տեղում: ՏԸՀ նախագահը կամ հանձնաժողովի քարտուղարը՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ, **ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ ՄԻՆՉԵՎ ԺԱՄԸ 20.00-Ն**, տեղամասային կենտրոնում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ բացում է շրջիկ արկղը և նրանում գտնվող քվեաթերթիկները ծալված վիճակում մեկ-մեկ գցում **համապատասխան** քվեատուփի մեջ՝ դրանում գտնվող քվեաթերթիկների հետ հաշվարկելու համար:

Շրջիկ արկղի միջոցով քվեարկության կազմակերպմանը կարող են ներկա լինել նաև վստահված անձինք, դիտորդները, ՋԼՄ ներկայացուցիչները:

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

Ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) կարող են բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

Դիմումը հասցեագրում է այն ընտրական հանձնաժողովին, որի իրավասության սահմաններում է բարձրացված հարցի լուծումը: Եթե դիմում տալու համար օրենսգրքով նախատեսված է վերջնաժամկետ, ապա դիմումը համարվում է պատշաճ ժամկետում ներկայացված, եթե այն մինչև վերջնաժամկետը մուտքագրվել է համապատասխան ընտրական հանձնաժողով:

Դիմումը պետք է՝

1. ստորագրված լինի դիմողի կողմից,
2. ներառի դիմողի անունը, ազգանունը, հասցեն, տրման ամսաթիվը,
3. դիմումում սահմանված լինի դիմումատուի պահանջը,
4. բերված լինեն հիմնավորումները, հնարավոր ապացույցները՝ առկայության դեպքում կցված լինեն դիմումին:

Եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա պետք է ներկայացվի նաև օրենքով սահմանված կարգով տրված **լիազորագիր**: Թեկնածուի, վստահված անձի, լիազոր ներկայացուցչի կողմից ներկայացված դիմումներին կից պետք է ներկայացվի դիմումատուի կարգավիճակը հավաստող՝ **սահմանված նմուշի վկայականի պատճենը**:

Ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը) վերադաս ընտրական հանձնաժողով բողոքարկելու դեպքում բողոք ներկայացնող կողմը կրում է իր ներկայացրած փաստական հանգամանքների ապացուցման բեռը:

Դիմումը ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել

! աշխատանքային օրերին՝ ժամը 09:00-ից մինչև 18:00-ն,

! քվեարկության նախորդ օրը՝ ժամը 09:00-ից մինչև 19:00-ն,

! քվեարկության օրը՝ ժամը 08:00-ից մինչև ժամը 22:00-ն,

! քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12:00-ից մինչև ժամը 18:00-ն,

! քվեարկությունից հետո 2-րդ օրը՝ ժամը 09:00-ից մինչև ժամը 11:00-ն:

Վերահաշվարկի, ընտրական տեղամասում **քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու** մասին դիմումները ներկայացվում են ՏարԸՀ՝

**! քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12:00-ից մինչև ժամը 18:00-ն,
! քվեարկությունից հետո 2-րդ օրը՝ ժամը 09:00-ից մինչև ժամը 11:00-ն:**

Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում տվյալ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները **քողարկելու իրավունք** ունի (ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում համապատասխան ՏարԸՀ ներկայացնելու միջոցով)

- Հանրապետության նախագահի թեկնածուն,
- Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն,
- Հանրապետության նախագահի թեկնածուի, Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վստահված անձը,

եթե նա ներկա է եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը,

- ինչպես նաև ՏԸՀ անդամը՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ **հատուկ կարծիք** ունենալու մասին գրառում կատարելու դեպքում:

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՊԱՄՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները պետք է իմանան, որ

1. ՎՐԱՉՎԱԿԱՆ ԻՐԱՎԱՍԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍՊՐԷ

• 40.2-րդ հոդվածի համաձայն.

Ընտրական հանձնաժողովի անդամի կողմից քվեարկության արդյունքների արձանագրությունը չստորագրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

• 40.4-րդ հոդվածի համաձայն.

Ընտրական փաստաթղթերի պարկը ՏԸՀ-ում սահմանված կարգով չփակելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

• 40.6-րդ հոդվածի համաձայն.

Ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը սահմանված կարգով չլրացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի մինչև երեքհարյուրապատիկի չափով:

• 40.15-րդ հոդվածի համաձայն.

1. Քվեարկության նախապատրաստման, քվեարկության և քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ տեղամասային կենտրոնում կամ քվեարկության սենյակում ներկա լինելու իրավունք չունեցող անձի կողմից տեղամասային կենտրոն պարբերաբար մտնելը (եթե գործողությունը շարունակվել է բանավոր նախագուշացումից հետո) կամ տեղամասային կենտրոնում ապօրինի գտնվելը (եթե գործողությունը շարունակվել է տեղամասային կենտրոնը լքելու բանավոր պահանջը ներկայացնելուց հետո)՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

2. Քվեարկության սենյակում ներկա լինելու իրավունք ունեցող անձի կողմից օրենքով սահմանված կարգով իր վկայականը դիտավորությանը տեսանելի ձևով չկրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

2. ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍՈՐՔԻ

• 147-րդ հոդվածի համաձայն.

Քաղաքացու ընտրական իրավունքի ազատ իրականացմանը կամ ընտրական հանձնաժողովի աշխատանքին խոչընդոտելը, ինչպես նաև ընտրական հանձնաժողովի անդամի, թեկնածուի, լիազոր ներկայացուցչի, վստահված անձի, դիտորդի, ՋԼՍ ներկայացուցչի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի յոթհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ վեց ամսից մեկ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

• 148-րդ հոդվածի համաձայն.

Ընտրությունների ընթացքում ծայներն ակնհայտ սխալ հաշվելը կամ ընտրությունների արդյունքները, այդ թվում՝ արձանագրությունները, դրանց պատճենները, այլ ընտրական փաստաթղթերը և դրանց քաղվածքները ակնհայտ սխալ տվյալներով հաստատելը, ընտրողի քվեաթերթիկը անվավեր կամ չսահմանված մնուշի դարձնելը, ինչպես նաև որևէ այլ եղանակով ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը կամ այդ նպատակով ընտրական փաստաթղթերը վերահաս ընտրական մարմիններին սահմանված ժամկետում չներկայացնելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

• **152-րդ հոդվածի համաձայն.**

1. Քվեարկության գաղտնիությունը խախտելու նպատակով ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելը, քվեարկության արդյունքը բացահայտելու նպատակով քվեարկած քվեաթերթիկը ստուգելը, քվեարկության խցիկ (սենյակ) մուտք գործելը, ինչպես նաև քվեարկության գաղտնիությունն այլ կերպ խախտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

2. Քվեարկողի կողմից բաց՝ երրորդ անձանց (բացառությամբ քվեարկողին օգնող անձի) համար քվեարկության արդյունքը տեսանելի ձևով քվեարկելը, ինչպես նաև շահադիտական նպատակով քվեարկության գաղտնիությունը քվեարկության արդյունքը բացահայտող փաստաթղթի լուսանկարահանմամբ կամ տեսաձայնագրմամբ ստացված տեղեկատվության հրապարակման միջոցով խախտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով:

• **157-րդ հոդվածի համաձայն.**

Վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ ՋԼՍ ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին սահմանված դեպքերում և կարգով ծանոթանալուն խոչընդոտելը, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճենները, քաղվածքները չտալը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

• **158-րդ հոդվածի համաձայն.**

Ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից իր լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որի արդյունքում անհնարին է դարձել ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության կամ ընտրության արդյունքների ամփոփումը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

ԱՐՄՈՒՌ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼԱՏՄԻՑՅԱՆ ԱՆՆԷՐ

Եզրվում է ընտրության անվանումը²

Եզրվում է ընտրության օրը, ամիսը, աստիճիվը

Արձանագրություն

Չիքան,

համայնք
ընտրության ընտրության արքայաթեղի

N / ընտրական տեղամասում

Եզրվում է ընտրության անվանումը

Տեղամասային ընտրական հանձնաժողովը, ինքը ընտրվելով անդամներ քյան արքայաթեղից, արձանագրում է.

Վկանագրերի արձանագրում
Տարի՝ Տ. և արձանագրում է.

Ընտրողների թիվը (Ը)	Քվեարկության մասնակիցների թիվը (Մ)	(Շ)	(Մ)
1 Քվեարկության օրը ընտրական տեղամասում կազմված ընտրողների լրացուցիչ ցուցակում Հասցանկային վարի (այդ դեպում՝ նկատառված հուշումը) և ընտրողների լրացուցիչ ցուցակում	1		
2 Հաջորդում չունեցող ընտրողների ցուցակում ²	2		
3 Ուսովանության ծառայողների լրացուցիչ ցուցակում ²	3		
4 Ստավանագր բաժնատասարայան ընտրողների լրացուցիչ ցուցակում ²	4		
5 Ընտրողների նվազագույն ցուցակում	5		
6 Ընտրողների թիվը (1-6 տողերի թվերի գումարը)	6		
Հանձնաժողովին համակցված ընտրողների թիվը			
Մարդկանց (օգտագործող) ընտրողների ընտրողների թիվը (նույնպես է օգտագործված ընտրողների թիվը և ոչ ժողով լրացված կամ մասնակցի կողմից ընտրողների թվերի գումարից)			
Անվավեր ընտրողների թիվը			

¹ Եզրվում է նշանակաբեկության հաջողության կամ մեղադրյալի մեղադրանքի կամ մասնակցի դեկլարացիայի կամ մասնակցի արձանագրության արձանագրության համաձայն բանից:

² Տարի՝ Եզրվում է աշխատանքային համաժամանակի և օրվան ընտրողների լրացում

<p>Քննիչական ազգանուն, անուն, նախանունը կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անվանումը (նաացվում է ըստ քննաթղթի վրա ներդրված անդամության)</p>	<p>Կամ թվարկված թվաթվերից մեկը</p> <p>Վերահսկողների տվյալները</p>
1.	
2.	
3.	
4.	
5.	
<p>Քննիչական դեմ ընդդիմական ընդդիմականների թիվը (տալը՝ իջված և մեկ թվից ավելի չպարզաբան)</p>	
<p>Ստճշտությունների գույնտարային ցանկ</p>	
<p>Ծանանակված նմաշյ թվաթվերից մեկը (ընդլուծվում է միայն ԱԶՇՅՅԳԳԿ-ի նախկին 76-րդ մասով նախատեսված կարգով կազմված մուտքային արձանագրության դրոշմով (արձանագրություններ) կրճատված)</p>	<p>Արձանագրությունում տվյալները լրացվում են թվերով և տասներով Ազգանուն, անուն, նախանուն _____ Ատարագրություն _____ Ատարագրություն _____ Ատարագրություն _____</p>
<p>Հոնեկոստություն նախագահ</p>	
<p>Եղբայրների ղեկավար</p>	
<p>Գործադիր</p>	
<p>Անդամներ</p>	
	<p>Ատարկության (նստուկ կարծիքի) համար _____</p>

Կ.Տ. Արձանագրությունը կազմվել է « 20 թ., ժամը _____ րոպե _____ րոպե:

ԼՐԱՅՆԱԿ Ե ՏԱՐԱԳՐԱՅԻՆ ԸՆԴՈՒՄՆԵՐԻ ԵՄԿԱՅԵՐԻ ԶԱՆՏԱՆԱԳՐՈՎ
 _____ տարաճային ընտրական հանձնաժողովում արձանագրություն ընդունվել է « _____ » 20 թ., ժամը _____ րոպե _____ րոպե:
 Հստակաձևով կարգավորված _____

Կ.Տ. Վերահսկողի իրավասացած Տարածքային անդամների կազմը

Ազգանուն, անուն, նախանուն _____	Ատարագրություն _____
Ազգանուն, անուն, նախանուն _____	Ատարագրություն _____
Ազգանուն, անուն, նախանուն _____	Ատարագրություն _____
Ազգանուն, անուն, նախանուն _____	Ատարագրություն _____

Կ.Տ. Վերահսկողի արդյունքին արձանագրություն է « _____ » 20 թ., ժամը _____ րոպե _____ րոպե:

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84¹/₁₆,
ծավալը՝ 3.25 տպ. մամուլ, տպաքանակը՝

Տպագրվել է «Դիզակ պլուս» հրատարակչության տպարանում
Յ.Յակոբյան, 25
Ստեփանակերտ-2020